3. Մէյսարու սուրբ Նշանի մատուռն,
4. Քարքանջու սուրբ Սահակի մատուռն,
5. Բաղուայ սուրբ Եղիայի մատուռն,
6. Բաղուայ սուրբ Մինասի մատուռն,
7. Դարբանդայ սուրբ Գրիգորիսի մատուռն։

Ամենայն բանով կարծես Աղուանից աշխարհը ձգտել է նմանիլ Հայաստանին՝ մանաւանդ քաղաքական և հոգեւոր իշխանութեանց դրութեան և վարչութեան մասին, զոր. նահապետական, նախարարական և թագաւորական կառավարութեանն ըստ քաղաքականին, իսկ ըստ հոգեւորին Առաքելական, Հայրապետական և Եպիսկոպոսական վարչութեան, ըստ այսմ՝ ինչ քաղաքական և հոգեւոր փառք ու պարծանք ունեցել է Հայաստանը, համարեա՛ աշխատել է ունենալ և Աղուանից աշխարհը։

Այսպէս իմանալու է և քաղաքական աղէտից, հալածանաց, նեղութեանց, սրածութեանց, գերութեանց և աւերանաց մասին, բայց այս մեծ տարբերութիւնը կայ, որ Հայը տոկուն ու դիմացկոտ լինելով և մանաւանդ կրօնի մէջ եռանդոտ, կեանքն ու կայքը զոհելով՝ պահել է Քրիստոնէական կրօնը, լեզուն և ազգութիւնը՝ արիւնով գարդարելով զեկեղեցին. իսկ Աղուանք կորցրել են այդ ամենը և իրենք էլ հետը կորել են, բայց թէ բաւական դիմադրել են կուսակաշտութեան, կրակապաշտութեան և մահմեդականութեան, այդ վկայում են Հայոց և Աղուանից պատմութիւնն և սրբավայրերն, և ուխտատեղիքն, որք մեծաւ մասամբ «Նահատակ» անունն են կրում, ըստ որում կան քանի ուխտատեղեր Շամախու Թեմումն, կարծես Աղուանից ժամանակից մնացած լինին, և բոլորը կարծես նահատակութեան տեղեր են հին ժամանակից մնացած, ինչպէս բաւական նահատակ անունով սրբատեղեր կան, զոր Մատրասայ, Բահլեան, Գանձակ գիւղ, Գիրք, Վանքաշէն գիւղ, Քարքանջ գիւղ, Արփաւուտ գիւղի վերեւ Սանդալան անունով բլրի գլխի սրբատեղը եւայլն։